

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԳ ՀՕՐ

25 Սեպտեմբերին, Հինգշաբթի, Ամեն. Ս. Պատրիարք Հայր Լիբանանեն Ս. Արքու վերադարձաւ ուր գացած էր կազդուրուելու:

Ուրախ ենք յայտնելու քե՛ն նորին Ամեն. բարեգործած կը վերադառնայ, շարունակելու համար մեծ գործը այս հաստատութեան:

ՇՆՈՐՀԱՔԱՇԽՈՒԹԻՒՆ

8 Հոկտեմբեր 1941ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը խաչ կրելու արժանութիւն շնորհեց Տ. Տ. Շնորհիք եւ Արքուն վարդապետներուն, ձեռնադրուած՝ 1935ին, լուսահոգի Տ. Թորգոմ Պատրիարքէն, եւ վարդապետական զաւազանի իշխանութիւնը ստացած՝ 1937ին: Երկու Հոգ. Հայրերը իրենց ձեռնադրութենէն ի վեր վարած են ամենէն փափուկ եւ պատասխանատու պաշտօններ: Հ. Շնորհիք եղած է զաւազանակիր Տ. Թորգոմ Պատրիարքի, Փոխ Տեսուչ Ժառ. Վարժ.ի, Տեսուչ Տպարանի, Հոգեւոր Հովիւ Հայֆայի եւ անդամ Տն. Ժողովոյ: Հ. Արքուն վարած է դարձեալ զաւազանակիր, Ժառ. Վարժ.ի Փոխ Տեսչի, Տնօրէն Ժողովոյ անդամութեան, եւ այժմ Մատենադարանի Տեսչութեան պաշտօնները:

«Սիոն», յանուն Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ միաբանակից եղբայրութեան կը շնորհաւորէ զիրենք, մաղթելով որ իրենց լանջփն վրայ շողովաւորող խաչը, փայլեցնէ նաեւ իրենց միսքն ու հոգին, ի փառս մեր Ս. Կրօնին եւ մեր խաչաշարչար եկեղեցիին ու ժողովուրդին:

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 24 Ռգոստ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբայ Մայր Տաճարին մէջ: Պատարագիչն էր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը որ եւ կատարեց երկու նոր արիդաներու օծումն ու ձեռնադրութիւնը (սեւ ձիւնի աշտրի):

✱ 30 Ռգոստ. Շր. — Նախասօցակ Վերափոխման վանքապատկան Պարոնտէրի շէնքը գացած Ժառանգաւորները վանք եկան, մասնակցելու համար երեկոյեան եւ յաջորդ օրուան վերափոխման հանդիսութեանց:

Կէսօրէ վերջ ժամը 3.30ին, ամբողջ Միաբանութիւնը, հանդիսաւոր երթով Կ'իջնէ Գեթսեմանի կը կատարուի՝ նոյնքան շուքով, «Հրա-

շտառ»-ով մուտքը Տաճարէն ներս: Կիրակեմից ժամերգութիւնէն ու նախատօնակէն վերջ, ամբողջ Միաբանութիւնը եւ ներկայ հասարակութիւնը Գեթսեմանիի Հայոց պարտէզը հլան, մէկ ժամուան դադարէ մը յետոյ շարունակելու համար պաշտամունքը: Ժամը 7ին կատարուեցաւ Հօգեւոր արարողութիւնը եւ յաջորդ օրուան ամբողջ ժամերգութիւնը: Գիշերը ժամը 11ին Միաբանութիւնն ու աշակերտութիւնը վանք վերադարձան:

✱ 31 Ռգոստ. Կիր. — Վերափոխում. Առաւօտեան ժամը 8ին Միաբանութիւնը եւ հաւատացեալներու խումն բազմութիւն մը, շքերթով Կ'իջնէ Գեթսեմանիի ծորը՝ «Հրաշտառ»-ով մուտքէն յետոյ, Կեր. Տ. Արտաւազգ Արքեպս. կը մատուցանէ Ս. Պատարագը Ատուածամօր գերեզմանին վրայ, եւ կը քարոզէ «Յայամհեռէ երանիցեն ինձ ամենայն ազգք» բնաբանով: Յոյց տուաւ որդիական զգացումը Յիսուսի մէջ՝ իր մօրը հանդէպ, որուն կեանքը վիշտ մը եղաւ իր դակիրն կսկիծով: Եւ Յիսուս իր իշուածով իր մօրը ննջած մարմինին, կնոջ դերին բարձրացումը, մայրութեան գաղափարին ազնւացումը հաստատած եղաւ:

✱ 1 Սեպտ. Բչ. — Մեղեղց. Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ. քարոզից Հոգ. Տ. Արթուր վրդ. խօսելով հայ կնոջ եւ հայ մօր գերին մասին, հանդէպ իր զաւակներուն: Լայնօրէն ծանրացաւ այն մեծ բարիքին շուրջ որ պիտի ունենար աշխարհը իր խաղաղասիրական տենչերուն, եւ կրօնքն ու բարոյականը իրենց ունեցած աւագ նպատակներուն մէջ: Այսօր աշխարհը կը տառապի հոգեկան վիճակներէ, որոնք միայն մօր մը գերին բարիքներէն կրնան ստացուի:

✱ 7 Սեպտ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն: Քարոզից Կեր. Տ. Կիւրեղ վրդ. «Մեծացուցէ անձն իմ զՏէր...» բնաբանով: Յոյց տալէ յետոյ կնոջ գերը քրիստոնէական քաղաքակրթութեան զանազան շրջաններուն, մասնաւորեց նոյն պարագան Հայաստան աշխարհի ներկայ զարգացման վիճակին, պարզելով իր գեղեցիկ տպաւորութիւնը, մեր հայրենիքին բարգաւաճ մէկ պատկերը ներկայացնելով:

✱ 14 Սեպտ. Կիր. — Գիւտ Գօտոյ Ս. Աստուծածնի. Միաբանութիւնը մեծ շուքով իջաւ Գեթսեմանի: Ս. Պատարագը մատուցեց Հոգ. Տ. Դէորդ վարդապետ ճանաչեան, որ եւ քարոզեց «Զի Տէր ոգին է, ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է» բնաբանով: Յոյց տուաւ որ աշխարհի մէջ կրնանք երթարկելով վիշտիբուն, նեղութիւններու, բանտի, ծեծի եւ ամէն կերպ տառապանքի. ոսկայն այդ բոլորը չեն կրնար ընկճել զմիզ, եթէ մենք ունենանք Ատուծոյ Հոգին, որով կ'աճի մեր մէջ երկայնմտութեան, քաղցրութեան, համբերութեան ոգին:

ՌԵԴԱԿՏԻ. — «Սիոն»-ի նախորդ հուլիս - Ռգոստոսիւն, էջ 207ին մէջ Գիւտ Գօտոյն արագել՝ Տիպոյ:

* 21 Սեպտ. կիր. — Երևանի Ս. Աստուածածին ի յԱճճալէ. Միաբանութիւնը չբերթով իշաւ 2րդ, Աստուածամոր գերեզմանին վրայ մատուցանելու Ս. Պատարագը: Քարոզիչ Հոգ. Տ. Նորայր Վրդ. «Ահաւասիկ կամ աղախին Տեառն» քնարանով. ներկայացուց Ս. կոյսը իբրեւ տիպար հրեշտակաւորութեան ոգիին: ուր անձը կը խնայահեցուի քարծրացումին համար աւելի գերարժէք իրողութեան մը, որ Աստուծոյ անունին ու վառքին ճառագայթումն է մարդուն մէջ:

* 27 Սեպտ. Շր. — Նախաօգնակ Խաչկերացի. կիրակնօրէց ժամերգութեան աւարտումին. ըստ սովորութեան. Քրիստոսի Ս. Խաչին մատուցող պարունակող ճանաչող թափօրով աւագ «եղան հանուեցաւ. Ամեն. Ս. Պատրիարք Հօր ձեռամբ, Ս. Գլխադրի մատուռէն: Ու կենաց վայրտով օրհնելէ վերջ հաւատացեալները. արձակեց ժողովուրդը ի խաղաղութիւն: Միաբանութիւնը, ժամերգութեանէ վերջ. պատրիարքարան ելաւ թափօրով և նարականի երգեցողութեամբ:

Իրիշերը կատարուեցաւ Հակոբի արարողութիւնը և մաս մը յաջորդ օրուան առաւօտեան ժամերգութեան:

* 28 Սեպտ. կիր. — Խաչկերաց. Մեծ հանդէսով պատարագեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և քարոզիչ քնարան առնելով խաչի գաղափարին պանծացումը եղող հոգեշունչ շարականին բառերը. «Փայտ կենաց որ փոխանակ մահաբեր պտղոյն պօրիստոս պաղարեցեցեր...» 3րդ տառաւ թէ ինչպէս խորաշէր մարդը պատմութեան մէջ խաչը ունեցած է իր նախատիպարները իբրեւ փրկութեան լատ կամ վրէժխնդրութեան գործիք: Նոյի տապաւնը, ժայռերէն ջուր իրենցնող Մովսէսի գաւազանը, խաչի տաճարները բժշկող սրնմէ օձը փրկարար խաչի խորհուրդը ունէին իրենց մէջ: Իսկ եգիպտոսը պատահաւոր, Փարաոնը սարսափեցնող գաւազանը՝ միջքը, չարիքը պատահաւոր գործիքն է Աստուծոյ ձեռքին: Խաչը ծայրագոյն վրէժխնդրութիւնն է Աստուծոյ, որ իր Միածին Որդին իսկ չխախցած անոր վրայ մեղեկութեամբ, այս կերպով ցոյց տաւ ըլլալու համար իր սիրոյն չափանիշը հանգիստ մարդկութեան:

«Հայր մեր» ժամանակ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն ի հանդիստ հոգեոց երկու հարազատ եղբայրներուն՝ Գրիգոր և Կարապետ Մեղրեաններուն՝ մեծագործ քարերարներուն Ս. Աթոռոյ: Ս. Պատարագի աւարտումին, Միաբանութիւնը թափօրով և երգեցմամբ պատրիարքարան եկաւ, ուր Ս. Պատրիարք Հօրը ձեռքէն ընդունեցան մէջ մէկ շխարհ:

Կէսօրէ վերջ, ժամը 3.30ին. Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Խաչկերացի մեծաշուք անդամատեր, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

Իրիշերը, միաբանական ընդհանուր սեղանին հոգեհաշ արուեցաւ ի յիշատակ Ս. Աթոռոյս զոյգ քարերարներուն: Սեղանին մասնակցեցան Ընծայարանի և ժողովուրդաւորացի սաները. որոնք. Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. ի խօսքէն յետոյ՝ քարերարներու գործը և ազգօգուտ ձեռնարկը գնա-

հատող, երգեցին քարերարին ձօնուած երգը Դուրեան Սրբազանէ: Ապա, լուցեալ ժամեղեններ ի ձեռն ունելով, Հոգեհանգստեան կարգը կատարուեցաւ:

* 29 Օգոստ. Բշ. — Մեղեղոց Խաչկերացի. Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Փրկիչ, ուր Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Պատրիարքական Փոխանորդ Հոգ. Տ. Մկրտիչ Արքեպս. Աղաւեսունի հոգեոյն ի հանգիստ. իր մահուան քառասունքին առթիւ: Քարոզիչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. «Երանի մեղեկներուն որոնք Տիրոջ անունով ննջեցին» քնարանով, 3րդ տառաւ թէ մարդիկ պիտի ընդունին վարձքը իրենց ճիգերուն՝ իրենց հոգիին փրկութեան համար կատարուած: Պիտի կորսուի յիշատակը ա՛յն մարդոց, որոնց գործը մինչև գերեզման միայն կը տանի յիշատակը իրենց անունին: — Ս. Պատարագի աւարտումին. թափօրով և երգով Ս. Փրկիչի ազգային գերեզմանատան մէջ ընդհանուր հոգեհանգիստ կատարուեցաւ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

* 6 Օգոստ. Դշ. — Պատրիարքարանս այցելեց Գահիրէի «Պաւլոս Էփիփանէ» օրաթերթի խմբագրապետ Պ. Ժան Լըկոյ, ընկերակցութեամբ իր տիկնոջ, զաւակաց և Գահիրէի թառն Դատարաններու նախագահին Տիկնոջ: Յարգելի հիւրերը Նորին Ամենապատուութեան կողմէ ընդունուեցան Դահլիճին մէջ և մեծարուեցան ըստ արժանւոյն: Ապա, Փոխ-Լուսարարապետ Գեր. Տ. Դէորդ եւ Առժամեայ Դիւանապետ Հոգ. Տ. Սերովբէ Վարդապետներու կողմէ առաջնորդուեցան Ս. Յակոբեանց Մայր Տաճարը, ուր ցոյց տրուեցան իրենց քանի մը եկեղեցական առարկաներ: Այցելիցին նաեւ մեր Վարժարանները, Մատենադարանը և Ս. Հրեշտակապետաց վանքը:

* 7 Օգոստոս Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Առժամեայ Դիւանապետ Հոգ. Տ. Սերովբէ Վրդ. ներկայ գտնուեցաւ յետ միջօրէի ժամը 5ին, Երուսաղէմի նախկին քաղաքապետ Բաղդու Պէյ Նէշաչիպի կողմէ իրապարանքի պարտէզին մէջ սարքուած թէյանեղանին:

* 30 Օգոստոս Շր. — Կէսօրին պատրիարքարանս այցելեցին այժմ իր հայրենիքը գտնուող եթովպացի ժէնէրայ Աղէպայի Տիկինը և իր երեք զուտերերը (Տիկին Պէրուս՝ կողակիցը եթովպացի ժէնէրայ Ֆիթաթարարի Պէրուսի, Օրիորդ Էմիլիս և Ալբոկ Աղէպայ) և հայրենիք իրենց վերադարձի առթիւ ընդունեցան Ամեն. Ս. Պատրիարք Հօր օրհնութիւնները եւ մաղթանքները՝ իրենց բարօրութեան և քարեղաջող ուղևորութեան համար:

* 31 Օգոստոս Դշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեցին՝ Գահիրէէն տեղս ժամանած Տէր և Տիկին ծանիկ Զազըր:

* 1 Սեպտ. Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ուղևորեցաւ Լիբանան, քանի մը շարժուան օգափոխութեամբ: Ն. Ամենապատուութեան ընկերացաւ Գեր. Տ. Արտաւազ Սրբազան: